Hentchak: Organe Central du Parti HENTCHAKISTE.

# ՀՆՉԱԿ

Journal Arménien mensuel XIX Année

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

## ԿՌԻՒԸ ՊԷՏՔ Է ՇԱՐՈՒՆԱԿԵԼ

Բալքանեան թերակղզին 1876-ի ձմեռնամուտին ընդհանուր խռովութեան մէջ էր,—Հերցեգովինան, Բոսնիան, Բուլղարիան ապստամբութեան դրօշ էին բարձրացրել. իսկ Սերբիան, Մօնթէնէգրօն զէնքի օգնութեան դուրս եկել։ Թուրք զօրքերը մարդկային մտքի ծնունդ ամէն տեսակ չարագործութեան բաժակը լցրել էին, և այդ մինչ այն աստիճան, որ Օսմանեան անբարոյաթեան ամենաջերմ պաշտպան Բէկօնսֆիլդն անգամ այլևս ինքն իրեն անկարող զգաց պաշտպանելու իր „հովանաւորած"ին։

Հարկաւոր էր վերջնապէս արմատական մի դարման խորհել, վերջնական մի կարգադրութեան գալ արիւնը դադարեցնելու համար։ Ու հրաւիրուեց Կ.-Պօլսի յիշատակելի կօնֆէրանսը։ Եւրոպական դիւանագիտութեան սա և խոհուն դիւաները ներկայ էին։ Նրանք տաք-տաք խօսում համոզում էին, ծրագրեր, հակածրագրեր էին կազմում Օսմանեան կայսրութեան և նրա բաղկացուցիչ ժողովուրդների բախտի նկատմամբ։ Յանկարծ թնդանօթ թնդանօթի վրայ որոտալ սկսեց. աւետի՜ս, աչքալուսա՜նք էր որ ծուխի քուլաների միջոցով ուղարկւում էր Թիւրքիայի չորս կողմերը,—Օսմանեանները „սահմանադրութիւն" էին ստացել։

Եղելութեանը ամենից աւելի անտեղեակ էին կօնֆէրանսի անդամները. բայց նրանց էլ շուտով յայտարարուեց որ իրենց խորհրդածութիւններին այլևս պէտք չկար, որովհետև Օ ս մ ա ն ե ա ն ս ա հ մ ա ն ա դ ր ո ւ թ ի ւ ն ը դալիս էր ոչ միայն բարեկարգելու Բալքանեան թերակղզու մէջ գտնուած ժողովուրդների վիճակը, այլ ամբողջ կայսրութեան մէջ եղածներինը։ Կօնֆէրանսիէններին մտքից իսկ չանցածը այդէն կատարուած իրողութիւն էր դարձել, որ հրանօթները աւետում էին որ Օսմանեան կայսրութիւնը օժտուում էր մի Պարլամենտով, համաձայն 1789-ի Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան սկզբունքների կազմւում էր ժողովրդական ներկայացուցչութիւն Մերեսև Վալիի խորհրդարանների սիստեմով. այլև սպակաս ի՞նչ բան էր մնում,—շուտով ամէն ինչ կը կարգաւորուէր և ամէն ժողովուրդ էլ երջանիկ օրերի կարժանանար . . .

Թուրքական այդ խաղը այնքան կոպիտ էր, որ արևելեան նենգութիւնը, խորամանկութիւնը մէկէն աչքի ընկաւ։ Ծաղրանքը ընդհանուր էր։

Ֆրանսիայի կողմից կօնֆէրանսին մասնակցում էին բարօն Բուրգուան և կոմս Շօդօրդի, Գերմանիան ուղարկել էր բարօն Վերթերին, Աւստրօ-Հունգարիան ներկայացնողները էին կոմս Զիչին և բարօն Կալիսը, Իտալիան իր ներկայացուցիչն ունէր յանձին Կօրտիի,—սրանք բոլորն էլ շուտով կարեցին կարծես թէ չուզեցին սուլթանական հովերից առաջացած սրբազան ոգևորութիւնը խանգարել։ Բոլորովին ուրիշ եղաւ Անգլիայի լիազօրների դերը՝ Էլիօտը և Սօլզբըրին իրենց առաջին այցելութիւնից դուրս գալուց յետոյ սկսեցին ժպտալ և իրենց ակըն… մի օրինաւոր բան չէին սպասում Օսմանեան Սահմանադրութիւնից։ Ռուսիայի ներկայացուցիչը գերագանցօրէն սրամիտ ժեներալ Իգնատիևը աւելի ուրախացաւ, նա պատրաստ էր ուզում, ահա նախատինքը տրուեցաւ։ Էտհէմ փաշան իր պաշտօնական զեկուցումն անելուց յետոյ, [illegible] ճագուկները ուտող աղուէսի նման բերանը սրբեց՝ մի կողմ անցաւ . . .

Կօլչակովը ևս աւելի ամփոփուեց իր համոզումի մէջ,—„Թիւրքիայի համար կամ autonomie կամ anatomie"—այդ էր եղած իր դատավճիռը սկզբից ի վեր։

Եւրոպայի մէջ յուզումը աւելի սաստկացաւ և մի լայն նոյնից արևմուտքը փոխադրուելց դէպի արևելք։

Արտաքին ճնշումները, ներքին ապստամբները Թուրք պետութեան անձնաւորութիւններին ստիպել էին մի վերջին խաղ էլ խաղալ ժամանակ վաստակելու և հակամարտ շահեր ունեցող պետութիւնների իրարու դէմ գրգռելու համար։ Օսմանեան պարլամենտը եկած էր՝ որպէս մի միջոց խաբելու ոչ միայն Եւրոպային, այլև Բալքանեան թերակղզու մէջ ապստամբութեան դրօշ բարձրա-

ցնողներին։

Մանջուրիայի դաշտերից շարունակ յետ-յետ նահանջող ռուս գիւղացիները Ցարսկոե Սելոյի բնակիչներին և բիւրօկրատական կառավարութեան պաշտպաններին ուզում էին հասկացնել որ նրանց աստղը սկսել էր արևելքից դէպի արևմուտք շրջան առնել . . . մայր մտնելու համար։

Ժամանակակից քաղաքակրթութիւնը իր ուսերի վրան առնող առաջ տանող հսկայ ուժի հաւաքածը՝ համառուսական պրօլետարիատը բռնել էր սրտալ և իր լայն, բազմաթիւ կուրծքի մէջ ամբարուած բողոքի, զայրի, վրէժի, ցասման լաւան դուրս ժայթքել։ Երկրային բռնապետութիւնը տեսնում էր իր առաջ բացուած վիհը անդունդը մի քայլ ևս, և ինքը վար պիտի գլորուէր։ Հրավառած հրավառակի, գիշերներ գիշերների յետևից սկսեցին տեղալ. պրօլետարիատը այդ բոլորին նշանակեցի չափ նշանակութիւն չտալով կռուի իր ճանապարհը շարունակեց։ Ցարը և՛ս աւելի նեղը ընկնելով՝ Հոկտեմբեր 17-ի խոստումներով յաջողեցաւ պրօլետարիատին հեռացնել միւս բոլոր դժգոհ տարրերից։ Ռէակցիան իր վերջին ուժը հաւաքեց և պրօլետարիատի շարքերի մէջ նոյն այն նախճիրը գործեց, ինչպէս իր ժամանակին արել էր Թուրք բռնապետութիւնը Բալքաններում։ (Գոնէ Հայաստանի 300,000 կոտորածը չկար։)

[illegible] հաւաքելու, իր զօրութիւնը ամրապնդելու շրջանի մէջը մտաւ։

Ընկալուած ժողովրդական ներկայացուցչութեան՝ ամենակայսրական սահմանադրութեան փոխարէն մէջտեղ եկաւ ծայրատուած, պոչատ „Դումա“, որ ամեն բան էր, բացի Սահմանադրող հաստատութիւն, ժողովրդային ներկայացուցչական մարմին լինելուց։

Ցարիզմի խոստումներից շլացած, մեծական բոպէներին գատալիք եղած, պրօլետարիատից բաժանուող դ ե մ օ կ ր ա տ ա կ ա ն տարրերը նոր հասկացան իրենց սխալը, բայց այլևս ուշ էր . . . ռէակցիան տիրապետում էր։

Ցարի տուած „Պետական Խորհուրդ“ը որքան որ իր ձևի մէջ հազիւ նշմարելի կերպով տարբերւում է Օսմանեան „Ծերակոյտ“ից, բայց իր էութեան մէջ նրա հետ նոյնութիւն է կազմում։ Սուլթանը կարող էր իր ուզած 300 մարդը նըստացնել վերին պալատի մէջ և այնտեղ իր միահեծան կամքը միահեծանօրէն թագաւորել տալ։ Բիւրօկրատիայի կազմած վերին պալատն էլ տարբեր նպատակ չունի, նա էլ մի թումբ է ժողովրդական ներկայացուցչութեան դէմ և անուր պատուար „ինքնակալական անձեռնմխելի իրաւունքներ“ի։

„Պետական Դումա“, ռուսական վարի պալատը, նոյնքան սակատուական (censitaire) է, որքան որ իր համարժէք օսմանեան Պատգամաւորական Ժողովը։

Եթէ երկու բռնապետութեան դիմած քաղաքական հաստատութիւնների մէջ էական մի տարբերութիւն կայ, առաւելութիւնը Թիւրքիայի կողմն է, որովհետև օսմանեան Սահմանադրութիւնը ընդունում էր ն ա խ ա ր ա ր ա կ ա ն պ ա տ ա ս խ ա ն ա տ ո ւ ո ւ թ ի ւ ն „Պառլամէնտի“, „Ազգային Ժողով“ի առաջ։

Անձերն էլ իրարուց շատ չեն տարբերւում։ Սուլթան Համիտ II-ն էլ կարող է տալ իր ժողովրդին, Նիկոլայ II-ն էլ։ Առաջինը նոյնքան աձպատրաստութեամբ յաջողել է իրեն եւրոպական քաղաքակրթութեան և ազատ հաստատութիւնների համակիր ներկայացնել, որքան որ երկրորդը։ Նիկոլան էլ միամիտներին կարծել է տալ թէ ինքը բարի, փափուկ սրտի տէր, բայց վախկոտ, տատանուող, կասկածաւոր մի արարած է, որքան որ իր համապատկեր Համիտը. երկուսն էլ հաւասար թուով փաստաբաններ ունեն եւրոպական մամուլ կեդրոնավայրերում հաստատող թէ ինչքան որ չարիք կատարւում է իրենց երկրների մէջ,—վեհափառ „փակուածների“ կամքերից անկախ է լինում։

Ոչ որ այնքան [illegible] համարհում, չէր տալում եւրոպական քաղաքակրթութիւնը, որքան որ Միդհատ փաշան, թէև ոչ ոք էլ նրա չափ բարձր սկզբունքներից, լայն գաղափարներից չէր խօսում։ Շառլատանութեան տեսակէտից „Գրաֆ“ Վիտտէն գերազանցեց „փաշա“ Միդհատին։

Ռուս բռնակալութիւնը իր գլխաւոր գծերի մէջ 30 տարի յետոյ կրկնեց այն, ինչոր 30 տարի առաջ կատարել էր իր անդրանիկ եղբայրը։ Օսմանեան Պառլամէնտի ընտրութիւնները աւելի արագ կատարուեցան, որովհետև սեղմիչ պատճառները աւելի խիստ էին. որքան որ շուտ՝ այնքան աւելի լաւ ներքին և արտաքին հաշիւները մաքրելու տեսակէտից։

Ռուսական ընտրութիւնները, ինչպէս նկատեց Ֆրանսիական „Le Temps“ը, կատարուեց „յամրօրէն, բայց աւելի ապահովաբար“։

Որքան որ երկու բռնապետներն էլ սկըզբում մի առանձին տրամադրութիւն ցոյց տըւեցին իրենց խոստումը դրժել և միայն բառերով կերակրել ժողովրդին, այնուամենայնիւ հարկը ս տ ի պ եց նրանց՝ իրենց խուսափողական դիրքերից դուրս գալ և „ներկայացուցիչներին“ հանդիպել։ Երբ օսմանեան Պառլամէնտը բացուեց և նա-

խաղաղը յայտարարեց թէ կառավարութեան կազմնակից եղողները ամբողջ աջ կողմը գրաւեն, իսկ դէմոկրատները ձախը, այն ժամանակ բացված „Պատգամաւորները“ բոլորն էլ տեղերից վեր թռչում և բարձր հրճուանքով ջանացին որքան կարելի է դէպ աջ կողմը երթալ. ձախը բոլորովին թափուր մնաց... Ով էր խնդրել իրեն հակակառավարական ներկայացնել, նոյն իսկ Պարլամենտում:

Ընդհանուր սկսուեց բուն կատակերգութիւնը, կառավարութեան բոլոր առաջարկներին „էվէթ, էֆէնդիմ“ պատասխանուեց և միաձայնութեամբ էլ ընդունուեց պատերազմ յայտարարել ա պ ս տ ա մ բ ն ե ր ի դէմ:

„Օսմանեան Ազգը“ իր կամքը յայտնելուց յետոյ ցրուեց: Պարլամենտական նստաշրջանը փակուեց ... մինչև այսօր:

Պարլամենտների պատմութեան մէջ Թիւրքականը յայտնի է „Էվէթ, Էֆէնդիմ“ի Պարլամենտ:

Ռուսական պաշտօն Դուման „էվէթ, էֆէնդիմ“ի Պարլամենտից կտարբերուի, դրան կասկած չունենք. բայց հարց, ձայների մեծամասնութիւն շահող „կադէտները“ (սահմանադրական ռամկավարականները), մինչև վերջ կաշխատե՞ն սեղմուած շարքերով մնալ, թէ՞ առաջին բաղխումից իսկ իրենց շարքերը կնօսրանան: Հասարակական բուրժուազիան քաջութիւն կունենա՞յ, երդուել չցրուելու՝ մինչև որ Ռուսիան ռամկավարական սահմանադրական չդառնայ, թէ՞ կօմպրօմիսների ճանապարհը կը բռնի, երբ սուինների սպառնալիքը տեսնի: Թէ ռուս. բուրժուազիան որքան ընդունակ կլինի Սէյեսներ և Միրաբօներ արտադրել—դա մօտիկ ապագայի կտեսնենք. թէև իր դերը մասամբ թեթևացած, դիւրացած է բաւականին պատկառելի թիւ կազմող գիւղացիների ներկայութեամբ:

Եթէ մի ցաւալի սխալ պատահեց, այդ այն է որ հասարակական պրօլետարիատը ամբողջապէս մ է կ և մ ի ա տ ե ս ա կ ուղղութիւն չբռնեց դէպի „Դումայի ընտրութիւնները“: Ձեռնպա՞հ մնալ, թէ՞ մասնակցել,—ռուս բռնապետութեան սահմանների մէջ ամփոփուած պրօլետարիատը, առանց կուսակցական երանգաւորումի և ազգային խտրութեան, այդ խնդրի նկատմամբ միայն մէկ պատասխան պիտի ունենար տալու: Պրօլետարիատի մի մասի մասնակցելը, իսկ միւսի ձեռնպահ մնալը աւելի վնասակար եղաւ, քան թէ օգտակար: Կատարուած սխալը այժմս ուրիշ կերպ պէտք է դարմանել:

—Ինչո՞ւ պարզ ու որոշ պիտի լինի թէ հասարակական ամբողջ պրօլետարիատի և թէ նրա հակառակորդների համար,—այդ այն է, որ մինչև չստեղծուի քաղաքական մի այնպիսի հաստատութիւն, մի այն տեսակ օրէնսդիր ժողով, որ կազմուած լինէր ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի քուէարկութեան հիման վրայ, մինչև որ ռամկավարական սահմանադրութիւնը իրականութիւն չդառնայ,—պրօլետարիատը ուրիշ դիրք չունի բռնելու, քան յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն: Պրօլետարիատի համար լ է գ ա լ հողի վրայ կանգնած պայքարը տեղի կունենայ միայն այն ժամանակ, երբ ամէն քաղաքացի, անխտիր իր վիճակից, ազատ կգայ և իր քուէն կտայ ուղղակի ու գաղտնի կերպով:

Իսկ մինչ այդ՝ հասարակական գործունէութիւնը ոչինչ ունի սպասելիք քաղաքական մի հաստատութիւնից,—լինի նա ներկայ պաշտօն Դուման կամ մի փոքր աւելի ընդարձակ—ուր տիրում է ընտրութեան ս ա կ ա ռ ո ւ ա կ ա ն եղանակը, ուր մէկը կարող է օրէնքներ դնել միւսի համար, առանց սրա կամքին և համաձայնութեանը: Եւ քանի որ այդ առաջին անհրաժեշտ պայմանները չկան, քանի որ հասարակական բուրժուազիայի ներկայացուցիչ կուսակցութիւնները եթէ անմիջապէս չբռնուեն բիւրօկրատիայի ձգած թակարդից ու նրա հետ չը միանան, աներևակայելի է որ մի օր նրանք իրենց կալուածատիրական ժանիքները ուղղակի պիտի դարձնեն դէպի պրօլետարիատը և պիտի ջանան նրան այլապէս խեղդել, նրան այլապէս ճորտացնել, քան անում էր բիւրօկրատիան—մեզ մնում է, ուրեմն, պայքարը շարունակել դ ա ս ա կ ա ր գ ա յ ի ն եւ նոյն սկզբունքի վրան կանգնած, առանց տարբերուելու կողմնակի ազդեցութիւններից:

Պայքարը դադարեցնելը „օսմանեան քաղաքացիների“ սխալը կրկնել կլինէր:

—Ռամկավարական-սահմանադրութիւն, ահա առաջին և նուազագոյն քաղաքական պահանջը հասարակական պրօլետարիատի, ահա անմիջական հանգոյցը որ նրանց բոլորին կարող է իրար հետ համերաշխօրէն կապել՝ անկախ իրենց անջատ կազմակերպութիւններից և հեռաւոր նպատակներից:

# ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

I

## ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆ

Հայկական խնդիրը վերջերս զբաղեցնում է մտքերը:

Ինչո՞ւ այդ խնդիրը մինչև ցարդ իր լուծումը չստացաւ. ինչո՞ւ պէտք եղածին պէս նա առաջ չի գնում. ի՞նչ պէտք է անել—ահա մի կարգ յեղյեղուող խնդիրներ, որոնց մասին կարծիքների երանգաւորումներ շատ կան: Մի բան պարզ է, այն՝ որ ամէնքն էլ՝ Յեղափոխական, Հակայեղափոխական, Պահպանողական, Բարենորոգչական հրապարակ են եկած իրենց թէզերով և մի կողմից աշխատում են իրենց դիրքը արդարացնել և միւս կողմից էլ՝ ընդհանրացնել իրենց համոզումները:

Եւ ինչ որ այդ իրարանցումի մէջ առանձնապէս աչքի է ընկնում, այդ այն է՝ որ Հայկական խնդրով հետաքրքրուողները և նրա մասին թեր ու դէմ կարծիքներ յայտնողները ամենից աւելի ծանրանում են Եւրոպական պետութեանց վրայ: Նրանք բաւականին խիստ բառերով դատափետում են շահամոլ, եսասէր, խոստմնազանց „Եւրոպայ"ի անտարբերութիւնը, նրա յապաղումը և դէպի միջամտութիւն ցոյց տուած փութկոտութիւնը:

Որ մեղադրանքները կարեկցող անկեղծ սրտերից են բղխում—դրա մասին կասկած իսկ չի կարող լինել, բայց որ դրանք դրական որ և է արժէք և հետևանք չունեն ու չեն էլ կարող ունենալ, այդ մասին էլ որ և է երկբայութիւն չի կարող լինել:

Բացատրուենք:

Մեր խօսքից դուրս է խնդրի այն մասը թէ արդեօք պէտք էր, որ ստիպման, ինչու, և ինչ տեսակի յոյս կարելի էր դնել Բեռլինի դաշնագրութեան վրայ: Այնքանը միայն կասենք, որ այդ դաշնագրութեան 61-րդ յօդուածը Եւրոպական Վեց Մեծ պետութեանց ժամանակաւոր ղեկավարիչ գիծը դառնալուց յետոյ՝ Հայկական խնդրով շահագրգռուող կողմերի առաջ բացւում էր երկու տրոշ ճանապարհ:

Նրանք՝ որոնք ամէն բան սպասում էին Բեռլինի դաշնագրութիւնը ստորագրող պետութիւններից՝ իրենք իրենց հետևողական, իրենք իրե՛նց համոզմունքներին հաւատարիմ մնալու համար՝ ուրիշ ոչինչ չունէին անելիք, եթէ ոչ ձեռքները ծալած նստել և սպասել այն օրին և ժամին, երբ 61-րդ յօդուածի գործադրութիւնը երաշխաւորող պետութիւնները կարող կլինէին, ի հարկէ իրենց ցանկացած ձևովը ու եղա- [illegible] թուղթը ձեռքներին առնելով՝ տպել թուրք կառավարութեանը որ իրենց սածին համակերպի և գործադրի Բեռլինի դաշնագրութեան որոշումը՝ հայերի մասին: Այդ մտածմունքը ունեցող մարդիկ մի բան էլ կարող էին անել, առանց իրենք իրենց հակասած լինելու,—երբ Հայաստանի մէջ որ և է աղէտ, կոտորած, հարստահարութիւն պատահելու լինէր, նրանք կատարելու իրաւունք կունենային Վեց պետութեանց ներկայացուցիչներին երթալու և պէտք եղած պաշտպանութիւնը խնդրելու, նման թոյլ որդուն՝ որ ամէն անգամ իր հօր կամ ազգականի օգնութիւնն է ուզում ուժեղ ստահակների դէմ: Նրանք կարող էին „Եւրոպայ"ի ուշադրութիւնը գրաւել, նրան ասելով թէ՝ տեսէ՛ք, զարկեցին, զարկում են. կոտորեցին, թալանեցին. կոտորում, թալանում են. ամա՛ն, մեր ճարը դուք էք, ինչ որ անելու էք՝ շուտ արէք. յիշեցէք ձեր խօսքերը, կատարեցէք ձեր յանձնառութիւնները: Եւ գանգատի, բողոքի իրենց արձանագրութիւնները համեմուած լացով, պաղատանքով՝ նրանք կարող էին ներկայացնել ու դատ, արդարութիւն պահանջել: Թեև աւելին, նրանք նոյն իսկ իրաւունք կունենային նրանց մեղադրելու, և իրենց արարքը տրամաբանական կլինէր, երբ տեսնէին որ իրենք յուսախաբ են լինում և իրենց պէտք եղած պաշտպանութիւնը չի տրւում:

Հայկական խնդրով զբաղուողների մէջ այդ գործելակերպին յարողներ եղան, և կան: Նրանք մի տեսակ հանդարտ պահանջատէրեր, խաղաղ պրոպագանդիստներ են, կամ „դիւանագիտութեամբ գործողներ", ինչպէս որ իրենք իրենց են յորջորջում: Ի հարկէ „դիւանագիտութեամբ" գործողները իրենց իրաւունքի մէջն էին՝ բայց պետութիւններն էլ իրենց իրաւունքից չէին հեռանում: Չէ՞ որ նրանք „գործի" (Հայկական խնդրի) տէրն էին և կատարողական թուղթ ունէին ու ամէն բան կախուած էր իրենց քմահաճ կամքից և ցանկութիւններից: Ուրեմն նրանք էլ, հարկաւորած ժամանակին, մեր դիւանագէտներին չէին զլանում պատասխանելու, ու միշտ էլ պատասխանում են, դիւանագիտօրէն:

Իսկ ինչ է դիւանագիտութիւնը.—„Գիտութիւն և միանգամայն արուեստ լաւ վարելու մի երկրի հասարակական գործերը", ասում է յայտնի Ալիբերը: Ու, համաձայն այդ սահմանին, դիւանագէտը շատ դժուարութիւն չի քաշում յայտնելու որ ինքը, ինչքան որ սրտացաւ, բայց հազիւ կարողանում է անել այն, ինչ որ անում է, այսինքն պլատոնական համակրութիւններ յայտնել, բառեր արտասանել և դրանք այնքան՝ որքան որ չեն հակասում իր երկրի հասարակական գործերը լաւ վարելուն", որպէս նա դուրս եկած կլինէր իր պարտականութեան և իրաւունքի սահմաններից, կգործէր իր երկրի իսկական շահերի դէմ ու դրանով ցոյց տուած կլինէր որ ինքը ո՛չ թէ լաւ կերպով է վարում հասարակական գործերը", այլ վատ, ուրեմն նրա առաջը կբացուէր հասարակական գործերից հեռանալու ճանապարհը և տեղի տալու այն ուրիշներին, որոնք աւելի լաւ էին հասկացել և ըմբռնել իրենց երկրի միայն շահերը և աւելի լաւ կարող էին վարել հասարակական գործերը:

Ամէն դիւանագէտ՝ հասարակական գործերի ղեկն իր ձեռքն առնելով՝ նախապէս գիտէ թէ ինչ տարրերից է բաղկացած statu-quo-ն, պետութեանց փոխադարձ պարտականութիւնները և իրաւունքները որոշող, շահերը երաշխաւորող ինչ պայմաններ և հիմունքներ կան արդէն: Դրանից յետոյ նրա համար խնդիր է գալիս թէ ինչ նոր պայմաններ պէտք է ջանալ ստեղծել՝ նորից իր երկրի հասարակական գործերը աչքի առաջ ունենալով, և նոյնպէս թէ ինչ դիրք բռնել՝ երբ մի նոր երևոյթ, պատմական մի նոր ուժ է երևան գալիս—բոլոր խնդիրների մէջ միշտ իր երկրի շահը ի նկատի ունենալ, ահա դիւանագէտի այբն և օմեգան՝ երբ նա իր պատասխանն է ձևակերպում իրեն դիմողներին:

Մեր մէջ, ինչպէս ասուեցաւ, „դիւանագիտական" ուղղութեամբ գործողներ եղան և դեռ կան: Նրանք իրենց համոզմունքի տրամաբանութեան մէջն են, երբ մի պետութեան այս և այն նախարարից և ազդեցիկ անձնաւորութիւններից միջամտութիւն և դրական օգուտ են ակնկալում, Հայկական խնդրի առթիւ, իրենց դիմումների ժամանակ:

Բայց յուզուած, ալեկոծուած Հայ կեանքի առաջ գլորած խնդիրը միայն այդ պատկերը չունեցաւ:

—Բեռլինի դաշնագրութիւնը ստորագրող պետութիւններից ամէն բան սպասողների կողքին երևան եկաւ մի ուրիշ հոսանք,—Յեղափոխականութիւնը: Ասպարէզ եկան մարդիկ, կուսակցութիւններ, որոնք Բեռլինի դաշնագրութեամբ Հայկական խնդիրը միջազգային ընդունելով հանդերձ՝ նրանք այդ խնդրի լուծումը տեսնում էին յեղափոխութեան մէջ: Հարկաւոր էր կազմակերպուել, երևան գնել ժողովրդական ոյժ

և բռնի կերպով փոխել, տապալել գոյութիւն ունեցող քաղաքական և տնտեսական կարգերը՝ նրանց տեղը նորերը դնել տալու հեռանկարով։ Ուրիշ է խնդիրը թէ արդեօք դա գործնակա՞ն էր, կարելի՞ էր, բայց իրողութիւնը այն էր, որ յեղափոխականները Հայկական Հարցի լուծման միջոցը ընդունեցին յեղափոխութիւնը։ Եւ նրանք՝ որոնք այդ ուղղութեան, գործունէութեան այդ եղանակին հաւատացողներ և հետևողներ էին, իրենք իրենց հաւատարիմ կմնային միայն այն ժամանակ, երբ իրենց գործունէութեան վերջնական յենարանը կանէին Յեղափոխական Ոյժը ստուարացնելը, ընդարձակելը. ուրիշ խօսքով յեղափոխական թէզը կը պաշտպանէին ո՛չ միայն խօսքով, այլ գործքով։ Մի յեղափոխական կուսակցութիւն դադարում է յեղափոխական լինելուց, երբ խոտորնակի միջոցներով գործելով ուզում է լեգալ հողի վրայ կանգնել։ Մենք ոչինչ չունենք ասելիք նրանց՝ որոնք յեղափոխական ոյժից ո՛չ միայն օգտակար ոչինչ չեն սպասում, այլև ոգի ի բռին աշխատում են այդ ոյժը արմատախիլ անել, աջ ու ձախ անուանարկել և ամէն դժբախտութիւնների պատճառ նրան համարել։ Ոչինչ չունենք ասելիք նաև նրանց, որոնք ամէն յոյս դրել են արտաքին միջամտութեան վրայ, միջամտութիւն՝ որ պիտի յառաջանար միայն այն պատճառով, որ Բեռլինի դաշնագրութեան 61-րդ յօդուածը կար։ Մեր խօսքը նրանց, այն յեղափոխական կուսակցութիւնների մասին է, որոնք առաջիններից տարբերւում էին նրանով, որ Հայկական Խնդրի լուծուելու միջոցը որոնում և տեսնում էին միայն յեղափոխութեան, յեղափոխական շարժումների մէջ։ Եւ խնդիրը հենց այն է, որ այս վերջին տեսակի գործողները մինչև վերջ իրենք իրենց հաւատարիմ չմնացին և չեն մնում։ Նրանցից ոմանք մտան մի երկդիմի, կեղծաւոր, ուրեմն և վնասակար դիրքի մէջ. Նրանք և՛ առաջին տիպի գործողներին հետևեցին և՛ երկրորդ՝ նայելով տեղին ու ժամանակին, —ինչոր ստեղծեց և ստեղծում է մի հակասական դրութիւն և ուղղակի վնասակար հետևանքներ յառաջացնում յեղափոխական գործի տեսակէտով։ Չի կարելի ժողովրդին ասել թէ յեղափոխութիւնը պիտի ընդունես քո ազատագրութեանդ միջոցը և միաժամանակ էլ նրան հասկացնես թէ կարող ես քո յոյսդ դնել այս և այն տէրութեան ներկայացուցիչների վրան։

Յեղափոխականների առաջին պարտականութիւնն է ժողովրդի ուղեղին մէջ այն միտքը դրոշմել թէ կոնգրէսները երբ որոշումներ են կայացնում՝ աչքի առաջ ունեն միայն ա՛յն ժամանակի պարագաները, ա՛յն ժամանակամիջոցում պետութեանց մէջ տիրող փոխադարձ իրաւունքի և պարտականութեան հասկացողութիւնը. Նրանք այն օրերում աշխատում են մի կերպ բաւականութիւն տալ ճիշդ ա՛յն րոպէի պահանջին և մտածում են այնպիսի միջոցներ գտնել, որով կարելի էր մի կերպ ընդհանուր համաձայնութիւն կայացնել ու վրդովուած խաղաղութիւնը վերահաստատել։ Առաջին րոպէն անցնելուց յետոյ՝ գալիս են նոր հանգամանքներ, ներկայանում են նոր պայմաններ և այդպիսով երէկուայ որոշումները մնում են մեռած տառեր և նրանց տեղ բռնում են նորերը։ Բեռլինի դաշնադրութիւնից առաջ շատ կոնգրէսներ են եղած՝ որոնց որոշումները մինչև ցարդ էլ անգործադրելի են մնացած։ Կոնգրէսների ժամանակ պետութեանց փոխադարձ պարտականութիւնները և իրաւունքները, որ մարմնանում են իրենց շահերի մէջ, որոշւում են ա՛յն ժամանակին համեմատ, նայելով թէ կողմերը ի՛նչպէս են ներկայացել և իրերը ի՛նչպէս են բացատրուել։ Կոնգրէսը կայանալուց յետոյ ո՛չ միայն նոր իրողութիւններ կարող են յառաջ գալ և ստիպել որ նախկին որոշումները անտես առնուին, այլև կներկայանան պարագաներ, որո՛նք կողմերին կըստիպեն ճիշդ իրենց երէկուայ որոշմանը հակառակ դիրք բռնել։ Դիզուած ա՞յնքան պատմական փաստեր կան խնդրի այդ մասը ճշդող, որ առանձին օրինակներ բերելու հարկ չկայ։

Ու ոք ոչինչ չի ունենալ ասելու յեղափոխական մի կազմակերպութեան, երբ նա հարկադրուած ժամանակին բացատրի, մեկնաբանի, պարզաբանի Հայկական խնդրի այս և այն կողմը, նրա բնաւորութեան այս և այն գիծը, թէ օտար մամուլի և թէ օտար ներկայացուցիչների առաջ, այդպիսի մի արարք կարող է համարուել որպէս մի լրացուցիչ պահանջ։ Բայց դա ամբողջ գործունէութիւն և նպատակ չէ։ Դրանով սակա՛յն չպիտի թոյլ տալ արմատանալու այն համոզումը թէ ո՛չ—յեղափոխական միջոցներով էլ կարելի է հասնել այն նպատակին, որին ձգտում է յեղափոխականը, սա ինքն իր գործունէութեանը առաջին թերահաւատը և ամենամեծ հարուածտուողը կլինի, երբ ժողովուրդը նրա գործերից հակայեղափոխական եզրակացութիւն դուրս կբերի։

Յեղափոխականի հրամայական պարտքը պիտի լինի ժողովրդին հասկացնել, որ եթէ Եւրոպական պետութիւնները մինչև ցարդ զօրաւոր կերպով չը միջամտեցին և իրենց ձեռքը չառան Հայկական խնդրի վերջնական լուծումը, դրա գլխաւոր պատճառն այն է որ Ոյժ՝ տևական, կազմակերպուած, մեծածաւալ Ոյժ երևան չբերեցինք, կամ չկարողացանք բերել։ Թիւրքիայի ճակատագրով մանաւորապէս հետաքրքրւող պետութիւնները չեն միջամտել, ու չեն միջամտում, որովհետև մենք մինչև ցարդ չենք կարողացել նրանց պետական շահերը խանգարել։ Իսկ այդ շահերը կարելի էր խանգարել միայն այն ժամանակ, երբ Հայաստանի մէջ ոյժ, ո՜յժ երևան կգար։ Առանց ոյժ երևան գալու չի խանգարուի Եւրոպական պետութեանց շահերը, իսկ առանց այդ շահերի խանգարուելուն միջամտութիւն չի լինիլ։ Միջամտութիւնը կգայ որպէս հետևանք, իսկ այդ հետևանքը յառաջացնող ազդակը ոյժը պիտի լինի։ Եւրոպական պետութիւնները Թիւրքիայի գործերին միշտ միջամտելու իրաւունք ունեն, բայց նոյն այդ իրաւունքը իրենց դատապարտում է և՛ ոչ-միջամտութեան, երբ նրանց շահերը բացարձակապէս խանգարող նոր ոյժ ասպարէզ չի գալիս։ Արտաքին միջամտութիւնը չի գալ ո՛չ խնդրելով, ո՛չ պրոպագանդայով, ո՛չ էլ կոչեր, աղերսանքներ արձակելով. նա երևիլ կստիպուի, երբ պետական շահը այդ քայլը ստիպողակա՛ն, հարկեցուցիչ կդարձնի. իսկ դա կլինի միայն այն ժամանակ, երբ Հայկական ոյժը երևան կգայ զօրաւոր կերպով՝ պետական շահերը խանգարելու աստիճան։

Մենք ասում ենք միջամտութիւն չի լինիլ, մինչև որ Հայկական Ոյժը Եւրոպական պետութեանց շահերը չխանգարի. իսկ այդ շահերը չեն խանգարուի ո՛չ անհատական տեռորական գործողութիւններով, ո՛չ Եւրոպայի այս կամ այն կապիտալիստի երկաթուղու

գծերը փչրելով, և ոչ էլ նրանց մէկի ու միւսի բանկան խորտակելով—այդպիսի գործողութիւններ պետական շահեր խանգարող գործօններ չեն, ու չեն էլ կարող լինել մինչև վերջ,—այդ ճշմարտութիւնը վաղուց մենք համոզուած պիտի լինէինք, եթէ Արևելեան խնդրի պատմութիւնը շատ մօտիկից ծանօթացած լինէինք։

Մի պետութեան շահերը խանգարւում են միայն այն ժամանակ, երբ նրա արտաքին քաղաքանութեան ղեկավարիչների համար պարզ է լինում այն հանգամանքը թէ տուած մի երկրում—օրինակ Թիւրքիայում—այլևս նախկին գոյութիւն ունեցող պայմանների վրայ յենուելով՝ անկարելի է պաշտպանել երկրի միայուն շահերը։ Ուրիշ խօսքով՝ երբ „հասարակական գործերը լաւ վարելու դիտութիւնը կամ արուեստը“ տեսնում է թէ արդէն եղած իրերի քննութեան վրայ կրթնելով՝ էլ անհնար է „լաւ կերպով վարել հանրական գործերը“ և, հետևաբար, անհրաժեշտ ու հրամայական է դառնում առաջացած նոր պայմանների մէջ փնտռել հասարակական, պետական շահերի պաշտպանութեան գործը, քանի որ հինը փոփոխող խանգարող նոր ազդակներ են հանդէս եկել։ Այդ ժամանակն է, ահա, որ դիպլոմատը, պետական գործերը վարող մարմինը—լինի արտաքին, լինի ներքին, որովհետև դրանք իրարու շարունակութիւն են կազմում—ինքը յառաջ է նետւում, գնում է գտնելու այն նոր ոյժը, որի ստեղծած պայմանների վրայ կանգնելով միայն ինքը կարող պիտի լինի շարունակել պետական շահի պահպանութիւնը։

Յեղափոխութեան և միջամտութեան փոխադարձ յարաբերութիւնները աւելի շօշափելի կերպով պարզելու համար օրինակը թանձրացնենք։

—Մի պետութեան արտաքին քաղաքականութիւնը նրա դիւանագիտութիւնը նման է մի կշիռքի, որի երկու նժարները հաւասարակշռութեան մէջ են գտնւում՝ սովորական ժամանակին։ Կշիռքի մէկ թաթի մէջ որ՝ գտնւում է բուն երկրում՝ դրուած են այդ պետութեան միայուն շահերի ծանրաքարերը. իսկ միւս թաթի մէջ, որ գտնւում է խնդրի առարկայ եղող ուրիշ երկրում—օր. Թիւրքիայում—դրուած են պատմութեան ընթացքում երևան եկող այն բոլոր պայմանները, դաշնագրութիւնները և ամէն տեսակի տնտեսա-քաղաքական ճանչցուած շահերը, որոնք մի կերպ հաւասարակշռել են առաջին թաթը և այդպիսով կշիռքը դրել կանոնաւոր ընթացքի մէջ։ Կշիռքը այդ դրութեան մէջ կմնայ, և պետական գործերը վարողների առաջին պարտականութիւնը կլինի կշիռքը շարունակ այդ վիճակի մէջ պահել, մինչև որ փոփոխութիւն առաջացնող նոր ազդակներ երևան չգան։

Խնդիրը բոլորովին փոխւում է, երբ խնդրի առարկայ եղող երկրում, մեր օրինակով Թիւրքիայում, հանդէս է գալիս նոր ոյժ և ղարկում է այնտեղ եղող թաթին ու խանգարմունք առաջ բերում.—այդ ժամանակն է որ մի երկրի „հանրական գործերը վարող“ անհատները կամ մարմինները կշիռքի, նիւթական շահի, այդ խանգարումը տեսնելով, տիպւում են առաջ գալ և կշիռքը հաւասարեցնելու գործի վրան մտածել։

Շահերը խանգարող նոր ոյժի դէմ դիրք պիտի բռնել,—բայց ի՞նչ տեսակի. նա ի՞նչ է բերում իր հետ. արդեօք նա իր երկրի շահերի պաշտպանութեանը աւելի լաւ պայմաններ չի՞ տալիս քան առաջուանը.—ահա խնդիրներ, որոնց լուծումը անյետաձգելի կդարձնի միջամտութիւնը։ Քաղաքական այդ նոր ոյժը հէնց որ երևան եկաւ, շահեր խանգարելու ծառայելով, միջամտութիւնը ինքնին հարկեցուցիչ է դառնում պետական միայուն շահերի տեսակէտից։

Հայկական վեց նահանգներում միջամտութիւն կլինի, երբ հայերի կողմից այդպիսի մի զօրաւոր ոյժ երևան կդրուի։ Մինչև որ այդ ոյժը չստեղծուի, արտաքին միջամտութիւնը կմնայ միայն բառ՝ զուրկ նշանակութիւնից։

Խնդիրն աւելի պարզելու համար առնենք ուրիշ օրինակներ էլ։

Ոչ մի պետութիւն այնքան կատաղաբար և յարատևօրէն չի պաշտպանել լեհական ազատութեան և անկախութեան գործը, որքան Ֆրանսիան, ի հարկէ իր շահերը աչքի առաջ ունենալով։ Այդպէս էր առաջուան ժամանակներում։ Վերջերս Ֆրանսիան ճիշդ դրա հակառակը գնաց. նա դաշնակցեց բիւրօկրատական Ռուսիայի հետ, որ Լեհաստանի դահիճն էր, այդ էլ ի հարկէ իր շահերի տեսակէտից։ Փոխուե՞ց Ֆրանսիայի արտաքին քաղաքականութիւնը,—այո և ո՛չ։ Ա՛յո, փոխուեց, որովհետև առաջ նա իր շահերի համար ուզում էր յենուել Լեհաստանի վրայ, բայց յետոյ յենուեց նրա հակառակորդ Ռուսիայի վրան։ Ո՛չ, ոչինչ չփոխուեց որովհետև Ֆրանսիան առաջ իր արևելեան Եւրոպական շահը աշխատում էր ապահովել Լեհաստանով, բայց յետոյ նոյնը ապահովեց Ռուսաստանով։ Ֆրանսիայում գտնւող կշիռքի թաթի մէջ եղող ծանրաքարերը նա երբեմն հաւասարակշռում էր Լեհաստանով, յետոյ նոյնը արեց Ռուսաստանով, թէև փոխուած մի արտաքին երևոյթ կայ, բայց էականապէս ոչինչ չկայ, որովհետև երկու դէպքումն էլ նրա շահը ապահովուած է։

Ո՞վ էր Ռուսիայի ամենաանկեղծ և ամենաանխարդախ բարեկամը եղած,—Անգլիան։ Ինչո՞ւ։ Որովհետև երբեմն Ռուսիան ոչ միայն շահագործութեան մի շտեմարան էր եղած իր համար, այլև նա ապահոված էր իր այն շատ հեռաւոր շահերը որին սպառնում էր ժամանակին Թիւրքիան։ Ինչո՞ւ յետոյ առած Թուրքիային պաշտպանել սկսեց նոյն այդ Անգլիան՝ ընդդէմ իր երբեմնի բարեկամի,—որովհետև „նա՝ ով որ իր քաղաքական հաւատամքը չի դարձրել թէ Հնդկաստանի բանալին Դարդանելի մէջն է, նրա հետ այլևս աւելորդ եմ համարում վիճաբանելն իսկ“,—ասեց Պիտտ Մեծը, որ թարգման էր անգլիական պետական շահերին և ապագայ ապահովութեանը։ Քրքրող աչքի համար փոխուած շատ բան կայ, բայց իրօք ոչինչ չկայ,—շափիւղայի երեսը փոխուել է, բայց շափիւղան շափիւղայ է, որովհետև երկու երեսն էլ իրենն են։ „Պետական գործերը լաւ վարելու“ գիտութիւնը իր նպատակին հասել է, որովհետև երկու դէպքումն էլ նա ինքն իրեն հաւատարիմ է մնացել, նա իր պաշտօնը, իր արուեստը կատարել, գլուխ է բերել։

Սրանից յետոյ պարզ է թէ ինչո՞ւ մենք ասում ենք, որ արտաքին միջամտութիւնը չի գալ, որ նա խաբուսիկ է, նրա վրայ յոյս դնելը ժամանակի կորուստ և գործին վնաս, քանի որ հայ յեղափոխութիւնը հարկեցուցիչ, կշիռքի նժարը խանգարող պետական շահերը վտանգող ոյժ երևան չի դնիլ։ Եւ մի յեղափոխական մարմին, իր կոչմանը, սկզբունքներին հաւատարիմ, հետևողական մնացող մի յեղափոխական կուսակցութիւն դէպի

այդ կողմն էր որ միշտ իր գործունէութիւնը պիտի ուղղէր։ Ո՛ւժ, Ո՛ւժ և դարձեալ ո՛ւժ, ահա՛ միջամտութիւն բերող, շահերը շուռ տուող լծակը։

Իսկ փոխանակ դրան՝ դժբախտաբար մեր ժողովրդի մի տգէտ մասը չէ միայն որ յոյսը դնում է այս և այն պետական անձնաւորութեան վրայ և դիմումների ճանապարհն է բռնում, այլ, աւելի դժբախտաբար, այդ միևնոյնը անում են և՛ Յեղափոխական անունը կրող կուսակցութիւնները։

Ի հարկէ մի ժողովրդի անգիտակից տարրին համոզելով, նրա թոյլ կողմերը շոյելով՝ կարելի է հեշտ կերպով ժողովրդականութիւն ձեռք բերել։ Բայց վե՞րջը, արդեօք տուժողը դարձեալ այդ անգիտակիցը չէ՞։

Երկու բան պարզ և որոշ պէտք է լինի ամենքի համար, առաջինը այն՝ որ Հայկական խնդիրը միայն վեց նահանգների խնդիրը չէ, նա սերտ կերպով կապուած է Արևելեան խնդրի էութեան՝ Թիւրքիայի լինել—չլինելու և նրա փոխարէնը ովքե՛ր լինելու հարցի հետ։ Նա դարերի հետ գործ ունի, զի նա չի շօշափում Թիւրքիայի մէջ եղած Եւրոպական պետութեանց ֆինանսա-տնտեսական և քաղաքական զանազան շահերը միայն, այլ նա խորհրդածութեան սեղանի վրան է հանում միաժամանակ Դարդանելի, Միջերկրականի, Պարսից ծոցի, Հեռաւոր Հնդկաստանի, Եփրատի գետահովտի . . . տիրապետութեան խնդիրները և ո՛րքան պետութեանց կենսական շահեր խաղի մէջ են մտնում, խաղ՝ որի մասին ամենալաւ գլուխները շատ երկար ժամանակներ մտածել, չափել, կշռել, հակակշռել են, սակայն վճռական րոպէին մնացել են տատանման ու անվճռականութեան մէջ։ Այդպիսի մի բազմակնճիռ խնդիր վճռելու համար՝ դիմումների, աղերսանքների բանալին չէ որ գործ պիտի տեսնի, այլ Ուժը, Յեղափոխական Ուժը,—ուղին որ մեզ ցոյց է տուել պատմութիւնը, ճշմարիտ ուղին՝ որի մէջ ընկել ենք երկար տարիներից ի վեր, ուղի՝ որի վրայ մատնանիշել են նոյն իսկ այն պետութիւնները և անձերը, որոնց մենք դիմումներ ենք անում և որոնցից միջամտութիւն խնդրում։

Մինչև 1896 թուականը հայ Յեղափոխական Ուժը, յայտնի սահմանի մէջ, կատարել է իր պարտականութիւնը, նրանցից յետոյ նա իր պատմական դերի մէջը չի գտնուել և դրա համար էլ ե՛նք այն՝ ինչ որ ե՛նք, և այդպէս էլ կմնանք, եթէ դարձեալ կշարունակենք նախկին ուղին. եթէ դարձեալ չենք հասկանալ մեր Դատի իսկական պահանջը և բուն ա ռ ա ր կ ա ն թողած՝ նրա ստուերի յետևից կընկնենք։

Երկրորդ՝ մեզ համար մի անգամ ընդ միշտ որոշ պիտի լինի և՛ այն, որ ո՛չ միայն խնդրելով, դիմումներ անելով արտաքին որ և է միջամտութիւն չպիտի կարողանանք առաջ քաշել, այլև նոյն անկարողութեան առաջը պիտի կանգնենք ամէն անգամ, երբ մտածենք թէ Հայկական Դատը կարելի է վճռել Հայաստանի այս և այն մասի մէջ կղզիացած, մանր շարժումներ յառաջ բերելով, բանկաներ օդը հանելով կամ երկաթուղու գծեր քանդելով,—դրանք ո՛չ արտաքին միջամտութիւն առաջ բերող տարրեր են և ո՛չ էլ որ և է կերպով Հայկական խնդիրը վճռող Ուժեր, դրանց փորձերը մենք տեսանք առատութեամբ։ Այսուհետև էլ այդ մեթոդով և ուղղութեամբ շարունակել ընթանալը մի մահացու հարուած կը լինի ուղղուած Հայկական Դատի սրտին։

Ոչ թէ հոսանքի հետ երթալ, այլ հոսանք ստեղծել որոշ նպատակի համար, կամ արդէն ստեղծուածը թումբերի մէջ առնել և դէպի մի որոշ ուղղութիւն հոսեցնել,—սա պիտի լինի իր պատմական դերին գիտակից ամէն յեղափոխական կազմակերպութեան գործը։ Դա դժուար և երկա՛ր աշխատանքի մի գործ է, բայց և դա բացարձակ անհրաժեշտութիւն է մեր Գործի վերջնական յաջողութեան տեսակէտից։

Այդ բոլորի հետ անվիճելի համոզմունք պիտի լինի և՛ այն, որ մի ժողովուրդ երկրաչափական, մաթեմաթիքական հաշիւների ենթարկւող մի առարկայ չէ, նրան անկարելի է ուզած ժամանակին առաջ քշել, ոտքի հանել, ապստամբութեան դաշտը մղել՝ ղ ե կ ա վ ա ր ի չ ա ն հ ա տ ն ե ր ի կ ա ն խ ա հ ա ճ ց ա ն կ ո ւ թ ե ա ն հ ա մ ե մ ա տ, ինչպէս որ համանման խնդիրների մասին մտածում են Բակունիստները։ Յեղափոխական գործը իր մնայուն պատճառները ունենալով մէկտեղ, նա պիտի աճի, զարգանայ պտուղ տալու համար պիտի հասուննայ. իսկ դրա համար հարկաւո՛ր է ժամանակ, յաջող պայմաններ, ծնող, ըստեղծող ուժեր։

Եթէ ո՛չ, յանկարծ կազմել խմբեր, զինել նրանց և մտցնել ժողովրդի մէջ, հ ր ա մ ա ն ա ն ե լ ո վ որ ապստամբութիւն առաջ բերուի—դրանք ժողովուրդներ ազատագրելու միջոցներ և մտքեր չեն. բացի մեր կեանքից՝ այդպիսի փորձեր շատ եղան թէ Իսպանիայի և թէ Իտալիայի մէջ Բակունիստների կողմից. իսկ այդ բոլոր ճիգերի—որքան էլ որ հերոսական—արդիւնքը եղաւ մի խոշոր զէրօ, մի կատարեալ դատարկութիւն։ Յեղափոխութիւնները չեն հրովարտակւում, այլ պատրաստւում։

Սրանից յետոյ գալիս են մի շարք այլ հարցեր.— Ի՞նչ է Հայկական խնդրի էութիւնը.—Ի՞նչ առել է Եւրոպական պետութեանց շահերը խանգարել և այդ ի՞նչպէս.—Ունի՞նք կամ կարո՞ղ ենք ունենալ այդպիսի մի ուժ Հայաստանում.—Շարունակե՞լ Հայկական Դատը թէ՞ բոլորովին մի կողմ թողնել և կամ սպասողական դիրք բռնել։

Դրանք են այն հրատապ խնդիրները, որոնց մենք կգանք պատասխանելու կարգով։

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

## ԼՈՒՍԱՆՑՔՈՒՄ

Վրացի quasi-Սօցիալ-Դէմօկրատների բերանը համարուող՝ „Կվալ“ անունով թերթը չուզեց անմասն մնալ այն ընդհանուր արշաւանքից, որ վերջերս, յայտնի և ծածուկ կողմերից, կատարւում է դէպի Հնչակեանութիւնը։ Մի քանի խօսք.

1) Թէ Հնչակեանները սօցիալիստներ եղած են կամ ոչ,—այդ մասին կհրաւիրէինք „Կվալ“ի խմբագիրներին կարդալ ռուս սօցիալիզմի հայրերից մէկը համարուող Պետր Լավրովի նամակը՝ ուղղուած մեր կուսակցութեան հասցէին։ Իսկ այդ ժամանակ, 1894, „Կվալ“ի խմբագիրները մտածած ունէի՞ն կամ մի բան արե՞լ էին իրենց սօցիալիստ լինելը յայտնող։

2) Եթէ Հնչակեանների սօցիալիստ լինելու մասին „Կվալ“ի խմբագիրները հարկ են տեսնում հաւաստիացումների, այն ժամանակ կթելադրէինք որ դիմեն իրենց շէֆ Պլեխանովին և նրան հարցնէին թէ ինչո՞ւ նա յանձըն առաւ Հնչակեան կուսակցութեան ներկայացու-

ցիչը լինել Ամստերդամի Սոց. Համագումարի մէջ: Երկուսից մէկը, կամ Պլեխանովը կոնգրէսականներին խաբում էր, կամ Հնչակեան կուսակցութիւնը սօցիալիստական սկզբունքների վրայ հաստատուած մի կուսակցութիւն էր: „Էլվա"ի խմբագիրները՝ իրենց եզրակացութիւնը տուած ժամանակին, աչքի առաջ թող ունենան և՛ այն հանգամանքը, որ Ամստերդամի Սոց. Համագումարի ժամանակ Հնչակեան կուսակցութիւնը Հայկական խնդրի գործօններից մէկն էր և իր գործունէութիւնը գլխաւորապէս Հայաստանում էր կեդրոնացրած՝ քան Կովկասում: Եթէ այդ ժամանակ Հայաստանում գործող Հնչակեան կուսակցութիւնը „նացիոնալիստական" էր, ապա ինչո՞ւ համար Պլեխանով Սօցիալ-դէմօկրատը յանձն առաւ այդ կուսակցութեան պաշտօնական ներկայացուցիչը լինել՝ էն էլ մի սօցիալիստական Արիոպագոսի առաջ:— Եթէ Հնչակեան կուսակցութիւնը „նացիոնալիստ" կուսակցութիւն էր, ասել է թէ նրա ներկայացուցիչ Պլեխանովն էլ մի նացիոնալիստ էր, իսկ եթէ Պլեխանովը ոչ—նացիոնալիստ էր, ասել է թէ այդպէս էր և՛ նրա ներկայացրած կուսակցութիւնը:

3) Որ հնչակեանները „ներկայացուցիչներից" կազմուած մի կօնֆէրանս են ունեցել, որոշել են ձուլուել Ռուս. Սոց. Դէմօկրատների հետ և թողնել Հայկական Խնդիրը,—դրանք արտառոց խօսքեր են, որ տարածեցին մի քանի թեթեւամիտներ, անձնական յայտնի միտումներից առաջնորդուած: Չենք ժխտում թէ Հնչակեանութեան մէջ այդպիսի մտածմունք ունեցող ա ն հ ա տ ն ե ր չեն եղած երբեմն, բայց մի քանի հոգին կուսակցութիւն չէին ներկայացնում: Մի կուսակցութեան գերագոյն, միահեծան մարմինը նրա Պատգամաւորական Ժողովն է: Հնչակեան Դ. եւ Ե. Պատգամաւորական Ժողովները այդպիսի բան չեն որոշած և ո՛չ մի կերպով: Հնչակեանների դիրքը պարզ և որոշ է—կռիւ Հայաստանում Սուլթանիզմի դէմ, յանուն Հայկական Դատի, առաջնորդուելով սօցիալիստական սկզբունքներով, կռիւ Ռուսաստանում, և մասնաւորապէս Կովկասում, Ցարիզմի և կապիտալիզմի դէմ յանուն սօցիալիզմի: Կա՞յ հակասութիւն այդ դիրքի մէջ—համեցէք խօսիլ և կռեսնուինք:

4) Թէ վրացի և թէ ռուս, այսպէս ասած, պաշտօնական Սօցիալ-դէմօկրատները աւելի քան չարաչար սխալւում են, կարծելով թէ Հնչակեանները ամէն բանի մէջ՝ urbi և orbi կուրօրէն իրենց կը հետևեն:

—Ոչ, ինչ կարող էք մտածել, մտածեցէք, բայց ո՛չ այդ: Հնչակեանութիւնը իր ուրոյն, որոշ ծրագրով առաջ կերթայ Ռուսաստանում, եթէ նա ձեզ, ինչպէս և ուրիշ սօցիալիստական կազմակերպութիւններին, համընթաց գտնէ տուած խնդիրներում՝ կարող է cause commune անել, իսկ եթէ ոչ՝ նա իր ճանապարհը կշարունակէ, և եթէ դուք դէմ կենաք՝ նա դէպի ձեզ նոյնպիսի հակառակ վարմունք կունենայ, ինչպէս դէպի բուրժուազական և սօցիալիստական միւս կուսակցութիւնները:

5) Թէ Հնչակեանները ինչ են արել Կովկասում.—գիտցէք, մեր ընկերներն առաջինն են եղած, դեռ 1900-ին, որ գործադուլներ են կազմակերպած և պրօլետարիատի շահերը պաշտպանած: Կովկասի հայ բանուորների ձեռքը առաջին սօցիալիստական գրականութիւն տուողը մենք ենք եղել: Ի հարկէ այդ ժամանակներում խնդիրը զուտ տնտեսական հողի վրայ էր, դեռ քաղաքական կռիւ սկսուած չէր որոշ գծերով. իսկ մենք շատ առաջ չէինք կարող երթալ, որովհետև մեր ձեռքին ունէինք մի այլ Դատ՝ Հայկական Խնդիրը:

6) Ռուսահայ դպրոցական, եկեղեցական և այլ կալուածների գրաւման գործին մէջ՝ Հնչակեան կուսակցութիւնը առաջինն էր որ սուր հանեց. սխալուեցա՞նք, իրաւունք չունէի՞նք այդպէս անելու, որպէս սօցիալիստներ: Շատ հետաքրքիր պիտի լինէր մի վրացի սօցիալիստի կարծիքն իմանալ այդ մասին:

7) Երբ Գօլիցինը մտել էր դեսլէրի դերի մէջ և ամբողջ Կովկասը կրունկի տակն էր առել, այդ ժամանակ Հնչակեանների և Գօլիցինի միջև տեղի ունեցաւ մի պատմական տրամախօսութիւն:

Գ օ լ ի ց ի ն—Այդ միևնոյն է, հայերը միայն հաջել գիտեն, բայց ոչ թէ կծել:

Հ ն չ ա կ ե ա ն —Ոչ, այդ միևնոյնը չէ, հայերը չեն հաջիլ, իսկ եթէ հաջեն, կըկծեն. իսկ երբ կծեն, գլխից կը բռնեն . . .

Հնչակեան դաշոյնը փայլեց, ու Կովկասը ազատուեցաւ այդ Բորենուց:

Հնչակեանների ինչ արած լինելը ամենից աւելի մանրամասնօրէն և լաւը կարելի է իմանալ ռուս գաղտնի ու յայտնի ոստիկանութեան կազմած ցուցակներից և արձանագրած դէպքերից:

Իսկ թէ Բագուի 1904 թուի դեկտեմբերեան քաղաքական ցոյցերի ժամանակ, ինչպէս և 1905 թուի յունուարի քաղաքական ցոյցերին թէ Բագուի և թէ այլ կարեւոր տեղերի մէջ Հնչակեանները ինչ գերակշիռ դեր են կատարել, դրա մասին աւելորդ է խօսել, քանի որ Պետերբուրգի արիւնլուայ կիրակիից առաջ ընդհանուր կռուի առաջին ազդանշան տուողը եղաւ Բագուն, ինչպէս որ խոստովանեց ինքը Պլեխանովը „Իսկրա"ի մէջ: Իսկ Բագուի շարժման ոգին—նոյնը յայտնի չափով կարող ենք ասել և՛ միւս արդիւնաբերական քաղաքների համար—Հնչակեաններն էին:

Գնանք հիմա „Էլվա"ին իրեն:

Որքան որ նորեկ, բայց արդեօք դուք կամ ձեր ընկերները չէի՞ք որ սև ծովի շրջաններում, երբ Հնչակեանները գործադուլ էին կազմակերպում, վրացի սօցիալիստներդ այդ առիթից օգտուելով, վրացի բանուորներին առաջ էիք մղում և գործադուլը կոտրել տալիս ու գործարանները, հանքերը լցնում էիք աւելի ցած վարձագնով աշխատող վրացի գործաւորներով: Եւ յետոյ չարախնդացութեամբ հայ բանուորներին էլ ակնարկում էիք, թէ աւելի լաւ կլինի որ դուք Տաճկաստան երթաք, այնտեղ աւելի լաւ գործ կարող էք գտնել: Սա մի իրողութիւն է որի մասին մեր ընկերները մի քանի անգամ գանգատուած են և մեր ուշադրութիւնը հրաւիրած:

Թէ դուք հայ-թաթարական ընդհարումների մէջ ինչ թթու նացիոնալիստական ուղղութեան հետևեցաք, դա արդէն մի ծանօթ փաստ է: Բայց դուք որ հայ-թաթարական կռիւներին չէի՞ք միջամտում, գէթ այն տեղերը, ուր որ կարող էիք, դուք չէի՞ք պատրաստուած ճիշդ այնպէս վարուելու Աջարների հետ, ինչպէս որ Հնչակեանները արեցին թաթարների նկատմամբ, երբ լսեցիք թէ նրանք մտադիր էին բիւրօկ-

բանիայի ձեռքում այն դերը խաղալ, ինչ որ Թաթարները խաղացին մեզ նկատմամբ։ Ուրիշ է թէ այդ իրողութիւնը չկատարուեց, բայց դա բոլորովին այլ հանգամանքների պատճառով. խնդիրը ձեր տրամադրութիւնն էր։

Դուք և ձեր կազմակերպութիւնը ի՞նչ ազնուութեամբ և ո՞ր գիտութեան հիման վրայ պահանջում էք, որ հայ գործաւորները ձեր շարքերի մէջը մտնեն, երբ թոյլ չէք տալիս, որպէս կազմակերպութիւն, որ մի հայ գործաւոր իրեն կամ իր ընտանիքը պաշտպանի նրանց (թաթարների) դէմ՝ որոնք գնդակների տարափով են խօսում։ Ի՞նչ կլինէր, եթէ բոլոր հայ գործաւորները լսած լինէին ձեր հրապուրիչ հրաւէրներին և մտած ու ձուլուած լինէին ձեր կազմակերպութեան (Ռ. Ս. Դ. Բ. Կ.) մէջ.—այսօր այլեւս ո՛չ թէ հայ բուրժուա, այլ հայ պրօլետարիատի նմուշն անգամ չէր մնացած լինիլ։ Այդ ժամանակ դուք ի հարկէ „պատմական անհրաժեշտութիւններ են“ ասելով ուսերնիդ վեր կըքաշէիք, ինչպէս որ այդ ընթացքի մէջը արդէն մտած էիք։

Այն հակառակ ոգին որ պաշտօնական Ռուս. Ս. Դ. Բ. Կ. ցոյց է տալիս վերջերս դէպի Հայկական խնդիրը —դա ամէն գիտակից հայ գործաւորի վրայ թէ ուշ կազդի ո՛չ միայն ո՛չ մի նշանակութիւն չտալ ձեր շաղփաղփութիւններին, այլև համոզուել, որ դատ, ուրոյն կազմակերպութիւններով է, որ նա պիտի կարողանայ իր պրօլետարական-ազատագրական դատը առաջ տանել, ջանալով միշտ ըստ կարելւոյն, համերաշխ գծի վրայ կանգնել ուրիշ ազգութիւնների պրօլետարիատի հետ, հաւասարութեան իրաւունքով։

Երկիւղ ենք կրում որ Պլեխանովիստների սօցիալ-դէմօկրատական սկզբունքները վերջ ի վերջոյ շատ էլ չը զանազանուին Աղայեանների և „Երիտասարդ Թուրքեր“ի տուած սկզբունքներից, ինչոր վերաբերում է մեզ համար մասնաւորապէս նշանակութիւն ունեցող Հայկական խնդրին։

Կովկասի մէջ եղած հայը, հայ գիւղացին, հայ գործաւորը մի անընդհատ շարունակութիւն են կազմում Հայկական վեց նահանգների մէջ եղած հայի, հայ գիւղացու և հայ աշխատաւորի։ Անջատող սահմանները մեզ համար de facto ջնջուած են 19 տարիներից ի վեր։ Դա ինչքան որ որոշ է մեզ համար, թող նոյնքան էլ որոշ լինի և՛ ձեզ համար, երբ մեզ հետ ուզենաք որ և է խնդրի առթիւ համընթաց լինել։

Հայ ժողովուրդը մի նուաճուող ժողովուրդ է թէ՛ Ռուսաստանի և թէ Տաճկաստանի մէջ, և հէնց պատմական այդ շրջանը մեզ դնում է բացառիկ պարագաների մէջ։

Իրենց քաղաքական ազատութիւնը և անկախութիւնը (Գերմանիա, Ֆրանսիա, Անգլիա) ունեցող ժողովրդների մէջ դասակարգային կռիւը իր բնականոն դրութեամբ կարող է առաջ երթալ, և պէտք է որ երթայ, թէև այդ տեղերն էլ երբեմն սեղմուածներ են լինում, այդ տեղերն էլ դասակարգային կռիւը, իր միայուն գոյութիւնը պահելով հանդերձ, երբեմն հարկադրւում է երկրորդ գծի վրան ընկնել։

Երբ Ֆրանսիական հասարակապետութիւնը վտանգի մէջ էր յետադիմականների կողմից, մենք տեսանք թէ սօցիալիստական և բուրժուա-հասարակապետական բոլոր կուսակցութիւնները ինչպէս cause commune արեցին և հաւասար իրաւունքներով, թէև տարբեր նպատակներով, կանգնեցան ընդհանուր թշնամու առաջ։ Այսօր ո՛չ մի ֆրանսիացի սօցիալիստ իր անմաթեթու բուրժուայի հետ չի մերժիլ միանալ, երբ խնդիրը գայ հասարակապետութեան պաշտպանելուն, թէ ներքին և թէ արտաքին թշնամիների դէմ։ Սովորական ընտրութիւնների մէջ՝ երբ սօցիալիստները տեսնեն, որ յաղթութիւն չեն կարողանում տանել, վերկուաքուէի ժամանակ նրանք իրենց քուէն en bloc տալիս են հասարակապետականներից իրենց աւելի մօտիկ եղողներին՝ օրինակ արմատականների ձախ թեւին։ Այդպէս էլ վճռեց Շալօնի կոնգրէսը։ Եթէ դա opportunisme է, բայց անհրաժեշտութիւն է, հետևանք արդէն եղած կեանքի, անցեալ գործօն ոյժերի։

Երբ այդպիսի րոպէներ ներկայանում են Ֆրանսիական կեանքի մէջ . . . —ինչպէս և միւս անկախ ազգերի— ապա այդպիսի անհրաժեշտութիւններ, և աւելի յաճախ, կարող են կրկնուել մանաւանդ նուաճուող ժողովրդների մէջ։

Ս. Կաուցկին խնդրի այդ մասը շատ լաւ լուսաբանել է. որին մենք կդառնանք մի ուրիշ անգամ։

Արդ՝ եթէ իրենց քաղաքական անկախութիւնը ունեցող ժողովրդների մէջ պատահում են րոպէներ, երբ դասակարգային հակամարտութիւնը մեղմանում, երկրորդ գծին է անցնում և հակամարտ դասակարգերը իրենց բոլոր կատեգորիաներով միանում են մի երրորդի դէմ, դասակարգային խորը շահերից դուրս, իրենց այլ հանրական իրաւունքների համար,—ուրեմն էլ ինչո՞ւ խծբծանքներ և դատափետումներ յարուցանել, երբ միևնոյն երևոյթը կրկնւում է և՛ նուաճուող ժողովրդների միջև։ Դա ժամանակաւոր բնաւորութիւն ունեցող մի անհրաժեշտութիւն է քաղաքակրթութեան ներկայ վայրկեաններում, մի անհրաժեշտութիւն՝ որ իր արմատներն ունի անցեալում կատարուած անարդարութիւնների մէջ, որ կանհետանայ միայն այն ժամանակ, երբ ամէն ժողովուրդ իր միահեծան տէրը կդառնայ, իր բախտի անօրինողը ինքը կլինի, երբ անարգել կտիրի աշխատանքի միահեծանութիւնը,—արտադրութեան միջոցները արտադրողների սեփականութիւնը կդառնան, և ընդհանուր ներդաշնակութիւնը ընկերային տիրող օրէնքը կլինի, իսկ մինչ այդ անհրաժեշտութեան հարկը պիտի տալ, զի յաճախ „մեռածը իշխում է կենդանուն“, ինչպէս ասած է Մարքսը, և նրան ստիպում է ոլորապտոյտ ճանապարհներով, անհրաժեշտ զիջումների ուղիներով առաջ երթալ։

Ամէն ժողովուրդ իր պատմական անհատականութիւնը պահելու ազատ և անձեռնմխելի իրաւունքը ունի, առանց իր կողմից ուրիշների համանման իրաւունքին սպառնալու,—դա որոշուած, ընդունուած մի խնդիր է ո՛չ միայն սօցիալիզմի կողմից, այլև նոյն իսկ կլասիկ լիբերալիզմի։ Երբ մի ժողովրդի կեանքի մէջ ներկայանում է պատմական մի այնպիսի րոպէ, որ խաղի է դրւում նրա այդ գերազանցօրէն բնական և անքննաբանելի իրաւունքը, այն ժամանակ դասակարգերի խտրականութեան գոյութիւնը երբէք արգելք չի կարող լինել, որ այդ ժողովրդի բոլոր տարրերը իրարու հետ միանալով՝ յետ մղեն սպառնացող ընդհանուր վտանգը։ „Ազգային

## ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻԶԻՑ

Ցարի կառավարութիւնը այժմ ուզում է իր սխալ հաշիւները մի կերպ ուղղել — թաթարներին իր գործիքը դարձնելով և նրանց բաց թողնելով հայերի վրայ: Կարծեց թէ դրանով ո՛չ միայն հայերին կանգնեցնելու էր և թոյլ չէր տար մասնակցելու համառուսական շարժումներին, այլ ակնկալով՝ մասամբ հասած կլինէր իր հայակեր քաղաքականութեանը: Յուսախաբութիւնը եղաւ մեծ, երբ թաթարների խայտառակ պարտութիւնը երևան եկաւ: Չնայելով որ թաթարները ամէն նախապատրաստութիւն ունէին և կառավարական ամեն պաշտպանութիւն վայելում էին, բայց սովորական էր տեսնել թէ ինչպէս հայ կռուողները 10-20 հոգի իրենց առաջն առած քշում էին հազարաւոր—այո հազարաւոր—հոգուց բաղկացած թաթար հորդաներ: Պարսկաստանի, Տաճկաստանի սահմանակցութիւնը չօգնեց թաթարներին, քիւրդերի օգնութիւնն էլ մի մեծ կշիռ չունեց—հայերը ջախջախեցին նրանց և բիւրոկրատիայի աչքերը բացուեց:

Հիմա մեռած ինքնակալութեան պաշտպանները իրենք են ասպարէզ եկել,—այն տեղերը ուր հայերը ո՛չ միայն թոյլ չտուին իրենց կոտորելու, այլ հերոսութեան մի մի օրինակներ հանդիսացան, այժմ բիւրոկրատիան ինքն է ուզում պատժել, անխնայ պատժել այն պատճառաբանութեամբ թէ ինչու նրանք իրենց թոյլ չտուեցին կոտորուելու կամ պարտուելու:

Այսպէս Շուշուայ գաւառում Տ. գ., Սօ., Ազոխ, Ճոր. տոր գիւղերը ենթարկուեցան բիւրոկրատական վանդալականութեան,—ծեծել, այրել, կողոպտել, տներ աւեր դարձնել, ահագին քանակութեամբ տուգանքներ վեր առնել և այդ բոլորը նրա համար որ այդպէս էին ցանկանում մի Ֆրէյլիխ, մի Երմօլաև: Սա մի ընդհանուր տրամադրութիւն է, որ արտայայտուեց: Ինչքան որ Վօրոնցով Դաշկովը ուզեց իր վրայից պատասխանատուութիւնը հեռացնել և մասնաւոր հարցաքննիչներ ուղարկեց եղածը քննելու ու իրեն հաղորդելու՝ այնուամենայնիւ դրանք երեսոյթները փրկելու միջոցներ են, որին ո՛չ ոք չի հաւատայ:

Թաթարները այժմ զինւում են բացարձակ կերպով Պարսկաստանից, Տաճկաստանից զէնքեր փոխադրւում են գրեթէ անարգել, որովհետև սահմանակից քիւրդերը և օսմանցի. տաճիկ ցեղապետները ամէն դիւրութիւններ տալիս են:

Կառավարութիւնը ո՛չ միայն զինաթափ չի անում թաթարներին, այլ նրանց զինուելը չտեսնելու է գործում: Դրա հակառակ, ինքնապաշտպանութեան անունով զէնքի դիմող հայ կեդրոնները ո՛չ միայն անխտիր զինաթափ են անում, այլև պատժում են, և կառավարութիւնը այդ անում է անխնայ կերպով:

Այս տարի „Քօչը" աւելի շուտ պիտի սկսի, դա մի շատ վտանգաւոր շրջան է և ամէն րոպէ ծանր ընդհարումներ կարող են յառաջանալ: Կռիւների ժամանակ թաթարները շատ աշխատեցին բոլորովին կործանել այն հայ գիւղերը, որ իրենց „քօչ"ի ճանապարհի վրան էին, բայց այդ ջանքերը իզուր անցան, նրանք կոտորուեցին և յետ մղուեցին: „Քօչ"ի շրջանում թաթարները լեռնալանջերը պիտի գրաւեն, այնտեղերից միշտ կարող են արշաւանքներ կազմել հայ գիւղերի վրայ: Որքան որ կառավարութիւնը խոստացել է „Քօչ"ը կանոնաւորել, բայց նրա խօսքերին հաւատացող և նշանակութիւն տուող չկայ:

Ընդհանուր ալեկոծեալ վիճակ—այս է դրութիւնը, ապագան մութն է:

Մեծ պատասխանատուութիւն աչքի առաջ ունենալով մենք էլ պատրաստուած ենք այս անգամ, ի հարկին, աւելի խտացած շարքերով դուրս գալ թէ աջ և թէ ձախ, հարուածը որ կողմից որ գալու լինի:

ՀՆՉԱԿԵԱՆ ՄԻ ԶԻՆՈՒՈՐ

16 ԱՊՐԻԼԻ, 1906, ԹԻՖԼԻԶ

## ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Փոթորկալից էր ընտրութիւնների օրը մեզանում: Ամբոխը յուզւում էր և դժգոհում: Պետական խաղը, օյին Դումայ այստեղի հասարակական գիտակից մասին շատ էր գրգռել: Ինչ ասել կուզէ որ յայտնի և աներես կերպով ազատութիւն էին վայելում „Մօնարխիստներ" կոչուած սև հարիւրակների կազմակերպութիւնը: Հալածւում էր նոյն իսկ սահմանադրական-ռամկավարական չափաւոր կուսակցութիւնը: Այդ կուսակցութիւնից չափազանց վախենում էին. դրանց յայտարարել էին „յեղափոխական ջհուդների և օտար տարրի կուսակցութիւն": Դրանց հասցէին ուղղած թռուցիկները լի էին հայհոյանքներով և այնպիսի յիշոցներով, որ հրաժարւում եմ բերել համեստութիւնից դրդուած: Ահա այդ խաղը կոչւում էր „ժողովրդական ազատ ընտրութիւն": Ինչ ասել կուզէ որ յեղափոխական կուսակցութիւնները, չնայած բոլոր արգելքներին, դուրս էին գալիս փողոց, սարքում էին միտինգներ, բացատրում էին ժողովրդին „Դումա" կոչուած խեղկատակութիւնը, պահանջում էին բօյկոտ, դրանց վրա ուղարկւում էին իսկոյն կօզակներ, կալանաւորւում էին խօսողներին: Ս. Դ.-կան բանուոր կուսակցութեան անդամներից շատերին կալանաւորեցին, որպէսզի գոնէ ընտրութիւնների օրը ազատ լինեն դրանցից: Աւելորդ է ասել, որ այդ միջամտութիւնը մի աւելորդ անգամ ևս խայտառակութեան դրօշմը դրեց կառավարութեան վրա: Ս. Դ.-կանների կալանաւորումով գործը չմնաց ի հարկէ, բողոքը և ցոյցը տեղի ունեցաւ իր կարգով:

Կիրակի, մարտ 26 ին, նշանակուած էին քաղաքի վեց թաղում ընտրութիւնները: Եւ թող դրանք ընտրութիւն համարուեն: Կօզակները և գօրօդովօյները, պրիստաւները շրջապատել էին ընտրութեան տեղերը, քաղաքի ամէն ծայրերում շրջում էին պահակախմբեր, լրտեսները վխտում էին ամբոխի մէջ և ինչ խայտառակութիւններ ասես չէին անում: Պէտք է ասած որ ամբոխից կային անգիտակիցներ, որոնք չէին իմանում թէ ինչպէս պիտի քուէարկել: Որտեղից էլ իմանային, երբ նախապատրաստական հազար ու մի միջոցների էին դիմած, որ ամբոխը անգիտակ մնայ: Ցուցակները կազմած էին այնպիսի բարդութիւններով, որ կրթուած մարդն անգամ ձեռքի դող կզգար գրելուց: Դրա վրայ աւելացրէք ուրիշ շատ մեքենայութիւններ: Օրինակ մտնում է լրտեսը մէկին, հետաքրքրւում է թէ ո՞ր կուսակցութեան թերթն է ձեռքում և երբ տեսնում էր սահմանադրական-ռամկավարականների ցուցակը՝ վերցնում է թերթը, փոխում և տալիս իրենցը: Անցնում էր դա, գալիս էր աջակողմեան մի ուրիշ չէֆը, դա էլ ցցում էր իր ցուցակը: Խեղճ մարդիկ չգիտէին ո՞րին [illegible]: Մօտենում էին միամտօրէն և իրենց ծանօթներից կամ վստահելի համարուածներից հարցնում. „ասացէք, խնդրեմ, ո՞րն է դրանցից ճշմարիտը": Ի հարկէ ով ազդում էր, ասում էր. լինում էին

այնպիսիները, որոնք տալիս էին չգրուած թերթեր, իսկ մի քանիսները յուզուած՝ թողեցին ու հեռացան, ասելով, „աւելի լաւ է բոլորովին չը մասնակցել“։

Ահա մի աննշան պատկերը մեր ընտրութիւնների։ Ունէ՞ք իրաւունք այդքան խարդախութիւններից յետոյ էլ սպասել, որ չեն յաղթել պահպանողականները։

Բայց — ի պատիւ առաջ մեզի — դրանք կրեցին մի այնպիսի խայտառակ պարտութիւն, որ մենք մեր լսածին չենք հաւատում։ Սակայն փաստը ակներև է, յաղթում են սահմանադրական-ռամկավարականները։ Վեց թաղից գրաւում են չորսը և այդպիսով 80 ձայնից ունենում են 58 ձայն։

Այդպիսով Աստրախանում, որտեղ „մոնարխիստները“ գոռում գոչում էին, թէ ունեն 40,000-ից աւելի հետևողներ, վաստակում են 22 ձայն միայն, դրանց մէջ են դեռ աջակողմեան բանակին պատկանողները։

Գանք հիմա յեղափոխականներին։ Ընտրութեան օրը դրանց բողոքը խիստ լայն չափեր ընդունեց։ Քաղաքի երրորդ թաղում մի մեծ միտինգ կազմուեց, որտեղ մասնակցեցին 10,000 հոգի։ Դրանց թափօր կատարելու ժամանակ յարձակուեցին կոզակները և ջարդեցին։ Ժամի երկուսը կլինէր։ Բայց և այնպէս սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան այդ փառաւոր միտինգը անցաւ մեծ աջողութեամբ։ Երեկոյեան ժամը վեցին ամբոխը կրկին խռնուեց, այս անգամ քաղաքի կեդրոնում, Նահանգապետի դրան առաջ։ Կլինէին 5,000-6,[illegible]00 հոգի։ Սկսեցին ճառեր, խայտառակել „Դուման“, պահանջել բոյկոտ... Ոստիկանները, կոզակները շան վոհմակի նման թափուեցին։ Ամբոխը չի ցրւում։ Սկսեց մի սոսկալի ջարդ։ Հարբած և գազանացած կոզակները աջ ու ձախ հասցնում էին իրանց մտրակներով, կոխրոտում ձիերով։ Մէկ օրիորդի մազերից այնքան քաշել էին և գլխին այնքան տուել, որ խեղճը ընկել էր գետին — սակայն հարուածները շարունակում էին տեղալ։ Մի պատուական թուրք վրայ է հասնում, որ ազատի անմեղ զոհին, խփում են սրան և ո՜րքան տխրագին — խփում են անխնա պատանու ամորձիքին։ Խեղճ թուրքը մնում է նստած և չի կարողանում տեղից շարժուել։ Բանից երևաց որ նա եկած էր Բաքուից և խիստ յուզւում էր միապետութեան մեքենայութիւններովը։ „Այդ լրբերը Բաքւում էլ այդպէս էին, — ասում էր թուրքը, — հայ-թրքական կոտորածների ժամանակ մկան ծակն էին մտել, իսկ երբ վերջացաւ կոտորածը, այն ժամանակ քթերը դուրս էին հանել“։ Թուրքի ազնիւ վրդովմունքը և արած քայլը մեր առաջ աշխարայ պատկերացրին, որ Բաքուի կոտորածներում գլխաւոր մեղաւորն էր թուրք ստոր մասը։ Արժանի եմ համարում շեշտել և մեր տեղական թուրքերի վերաբերմունքը ընտրութիւններում։ Նրանք բոլորը յարել էին սահմանադրական-ռամկավարական կուսակցութեան, բողոքում էին ջարդերի և խժդժութիւնների դէմ։

Ամբոխը էլի հաւաքւում է, այս անգամ այգում։ Կրկին ճառեր, բողոքներ... Կոզակները խուժում են այգի, դռները փակում և կրկին ծեծում ու մտրակում անզէն ժողովրդին։ Անմեղ օրիորդներից մէկը փախչում է պատնէշի վրայից դէպի փողոց, փէշը փաթաթւում է վանդակին և մնում... Վրայ է հասնում սրիկայ կոզակը և հարուածների կոյտ է թափում է։ Մի ուրիշ կոզակ մտնում է մի նրբանցք, հարուածում է այնտեղ թաքն կացած զոհերին և այն ժամանակ է թողնում, երբ եռանից քարերի հարուածներ են տալիս։ Ջարդուել են շատ շատերը, ասում են չի խուսափել ջարդից նոյն իսկ ժանդարմի պոլկովնիկի աղջիկը, քերթել են նա՛և մի քանի [illegible] կոշիկները։ Հարուածները տալիս էին գլխներին և նազուկ տեղերին։ Դժգոհութիւնը ծափազանց սաստկանում է։ Գիշերուայ դէմ մի այլ տեղում 40 հոգուց բաղկացած մի խումբ կանգնած երգելիս է լինում „մարսելեզը“։ Երկու կողմից յարձակւում են, դրանց էլ լաւ ծեծում են։

Ջարդուածների բաւականին մեծ թիւ կայ։ Միւս օրը ծախուած թերթերը կառավարութեան արարքը արդարացնելու համար, գրեցին թէ կոզակներից 5-ին վիրաւորել են, այն էլ ցոյցից առաջ ատրճանակ են արձակել, քարեր են գցել... Բայց ո՞վ կարող է հաւատալ, որ ատրճանակը լրտեսի գործ չէ։ Արդարացնում են իրանց, որ պարտէզում ծեծելիս, սպան կանգնեցրել է կոզակներին և չի թողել ծեծելու, ծեծ տւողները եղել են ծեր կոզակները։ Հաւատա՞նք, որ սպան տրամադրուած չի եղել գազանութիւնների։ Այն ժամանակ ինչո՞ւ է մնում այգի դռները փակել տալիս և անմեղ զբօսնողների վրայ յարձակւում, կամ թէ մեղաւոր ճանաչուածներին ինչո՞ւ դատի չեն ենթարկում։

Սակայն մի՞թէ կարիք է զգացւում դրանց լարախաղացութիւններին լուսաբանութիւններ տալ։ Մենք այսքանը կասենք, ծեծեցէ՛ք կուրացած սրիկաներ, ծեծեցէք, որովհետև դրանով մեծ ծառայութիւն էք անում յեղափոխութեան և մի օրում մեր շարքերը աւելացնում էք հազարաւոր դժգոհներով։ Եթէ ձեր հաստատարանից մեծերը շրջէին ժողովրդի մէջ և լսէին, թէ ո՜րպիսի դժգոհութիւն և անէծք է թափւում միապետութեան հասցէին՝ բոլորովին անտարբեր, նոյն իսկ յեղափոխականներին հակառակ մարդկանց բերնից, եթէ այդ տեսնէիք, կրկնում ենք — դուք ձեռաց կը թողնէիք ձեր սխալ քայլը, չէիք կարող հանդուրժել, թէ այդ ջարդերը խոշոր չափերով փորում են ձեր ոտքի պատուանդանը։

Բայց կուրացածներին չէ վիճակուած տեսնել։ Դա էլ մի պատիժ է, որ ծանրանում է ձեր վրայ։

28 մարտ, 1906 ԺԱՆԻՔ

Ամսոյս 7-ին, Պարիզի Հնչակեան Մասնաճիւղի հրաւէրով, ընկեր Ս. Սապահ-Գիւլեանը, Hotel des Sociétés Savantes-ի դահլիճներից մէկում բաւականին հոծ բազմութեան առաջ, կարդաց դասախօսութիւն։ Նիւթն էր՝ „Արևելեան խնդիր և Հայկական Դատ“։

Կուսակցութեան ԿԵԴՐՈՆԱԿԱՆ գանձարանում ստացուել են հետևեալ գումարները.—

| | |
|---|---|
| ՓԱՐՈՍԻ Մ-ից | 266 Ֆ. |
| ՌՈՒՍՃՈՒՔԻ " | 118 Ֆ. |
| ՔԻՕՍՏԷՆՃԷԻ " | 500 Ֆ. |
| ՔԼԻՎԼԷՆՏԻ " | 128 Ֆ. |
| ԽԱՑԼԱՑԻ " | 200 Ֆ. |
| ԻՆՃԻԼԻԻ " | 400 Ֆ. |
| ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒՏԻ Մ-ից | 35 Ռ. |
| ՓԱՐԻԶ, մի բարեկամից | 500 Ֆ. |

Գրամ, նամակ և այլն ուղարկել.—
M. BELLART — 7, Rue Campagne-Première 7, PARIS.
(France)
Imprimeur-Gérant Gabriel FARJAT.